ISSN 1829-0361

ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(13)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(13)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(13)

YEREVAN 2024 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(13)

ԵՐԵՎԱՆ 2024

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Նելլի Կարապետյան – *պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր,* Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ,* Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ,*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,*
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԽԻՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ Եսայան

Տավուշ գավառի հոգևոր-մշակութային կյանքը 17-րդ դարում 8

Իրինա Բաղալյան

Այլախոհական և իրավապաշտպան շարժումները
խորհրդային հայաստանում 1960–1980-ական թվականներին 19

Սամվել Պողոսյան

Տիրան արք. Ներսոյանի արխիվը Երուսաղեմի
Հայոց Պատրիարքության Մայր Դիվանում (տեղեկագիր) 37

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մաքսիմ Եվաղյան

Նախնական դիտարկումներ Միտրիդատ I թագավորի դրամի մասին,
չհրապարակված կորպուս և մտորումներ նրա թագավորական
գաղափարախոսության մասին 52

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ասպղիկ Իսրայելյան

Հայկական գաղթավայրերից մի քանիսի ոսկերիչները 70

Հրազդան Թոքմաջյան

Պաշտամունքային կառույցները ասեղնագործություններում 92

Արփակ Ասատրյան

Խորանազարդ սինիներ (ըստ ՀԱԹ, ՀՊԹ, ԵՔՊԹ, ԿԵԹ և ԴԵԹ նյութերի) 99

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Լիաննա Գևորգյան

Ձանգվածային մշակութային միջոցառումները որպես
ժամանակակից թանգարանի գործունեության ակտիվացման միջոց 122

Մեդա Գալստյան

Հավերժի ճամփորդներ. Անկատար երազանքներ ցուցադրությունը 136

Տաթևիկ Մարոյան

Սուրճի առօրեականության պատմության թանգարանային
ներկայացումը և շարունակական կրթության բաղադրիչը 149

Մանե Խառատյան

Ճապոնական ոկիյո-է գրաֆիկական աշխատանքների
ՀՊԹ-ում պահվող հավաքածուն 164

Ասպղիկ Սիմոնյան

Հնագիտական առարկաների վերականգնում. խեցեղենի
վերականգնման առանձնահատկությունները 192

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 199

DOI:10.56653/18290361-2024.13-8

Անդրանիկ Եսայան

ԳԱԱ Պատմության ինստիտուտ
yesayan1990@gmail.com

ՏԱՎՈՒՇ ԳԱՎԱՌԻ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ 17-ՐԴ ԴԱՐՈՒՄ*

Հիմնաբառեր. Տավուշ, Սեֆյան Իրան, Խորանաշատի եպիսկոպոսություն, Բերդ, Հովհաննես եպիսկոպոս, Եսայի գրիչ, ձեռագիր

Ներածություն

Տևական պատերազմների հետևանքով Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսության ենթակայությամբ գտնվող Տավուշի հոգևոր հաստատությունները 15–16-րդ դարերում խիստ տուժել էին: Բացի այդ, կաթողիկոսական աթոռի շուրջ ծավալվող մշտական վեճերն ու երկպառակությունները բացասական ազդեցություն էին թողել ենթակա թեմերի գործունեության վրա (Մկրտումյան 2006, 54–78): Աղբյուրների կցկտուր տեղեկություններից բխում է, որ 16-րդ դարում Տավուշի թեմը որպես առանձին եպիսկոպոսություն, դադարել էր գործել՝ հավանաբար ներառվելով Ջակամի թեմի կազմ: Այս ենթադրության օգտին է վկայում այն, որ Տավուշը որպես առանձին թեմ հիշատակված չէ Սեֆյան շահ Թահմասպ I-ի՝(1524–1576) հայոց Միքայել Սեբաստացի կաթողիկոսին տրված (1548 թ. դեկտեմբեր – 1549 թ. հունվար) հրովարտակում (Փափազյան 1956, 59):

17-րդ դարի սկզբին հյուսիսարևելյան Հայաստանը անցնում է Սեֆյան Իրանին և ավելի քան հարյուր տարի տարածաշրջանը զերծ է մնում լայնամասշտաբ ռազմական գործողություններից: Ստեղծված համեմատաբար խաղաղ պայմանները էական նշանակություն են ունենում Տավուշ գավառի հոգևոր-մշակութային զարգացման համար: 17-րդ դարասկզբից վերականգնվում է Տավուշի թեմի գործունեությունը, որի կենտրոնը Վանական Վարդապետի հիմնած Խորանաշատի վանքն էր: Երկար ընդմիջումից հետո այստեղ ակտիվանում է հոգևոր կյանքը, կարգավորվում է միաբանության գործունեությունը: Սույն հոդվածով կանդրադառնանք Տավուշ գավառի 17-րդ դարի հոգևոր-մշակութային կյանքին՝ քննության առնելով տեղի հոգևոր կենտրոններում ընդօրինակված և մեզ հայտնի ձեռագրերն ու այդ համատեքստում նաև կլուսաբանենք Խորանաշատի թեմակալների եկեղեցաշինական գործունեությունը:

* Ստացվել է 04.04.2024, ուղարկվել է գրախոսման 05.04.2024, ընդունվել է տպագրության 01.07.2024:

Տավուշ գավառի 17-րդ դարի ձեռագրական ժառանգությունը

Երկար դադարից հետո 1620 թ. ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում վերստին հիշատակվում է Տավուշ գավառի նշանավոր Խորանաշատի վանքը: Հակոբ անունով քահանան իր ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում գրում է. «Փառք...//...: Արդ՝ գրեցաւ զսբ. աստուածախաւս աւետարերս, որ կոչի Աւետարան: Գրեցաւ ձեռամբ զանարժան և մեղսասէր փծոն գրչիս անուամբ Յակոբ, որ կոչի սուտ երէց, ի դուռն Ս. Բարձրահամբաւ Ս. Խորանաշատու և ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, Ս. Վանական վարդապետիս և Գրիգոր վարդապետիս և Ս. Յովանիսիս, ի ծորս Ջակամայ, ի գիւղս որ կոչի Լըղարակ», (Հակոբյան, Հովհաննիսյան 1974, 725): Նկատենք, որ գրիչը վրիպմամբ Խորանաշատը տեղադրել է հարևան Ջակամ գավառի կազմում:

Սկսած 1630-ական թթ. Տավուշ գավառում բեղմնավոր գործունեություն է ծավալում Եսայի գրիչը: Իր հիշատակարաններից իմանում ենք, որ նա Տավուշ գյուղից էր: Հայրը Իսրայել քահանան էր, իսկ մոր անունը Խոնդաղ էր (Հակոբյան 1984, 73): Ունեցել է բազմանդամ ընտանիք՝ 3 որդի, 6 դուստր, 2 թոռ: Որդիներից Սենեքարիմը սարկավագ էր (Հակոբյան 1984, 73, 182):

Արդյունաշատ գրչից մեզ հայտնի են թվով 8 ձեռագրեր, որոնցից 5-ն ընդօրինակվել են Տավուշ գյուղում, մյուս երկուսը՝ հավանաբար Խորանաշատում, վերջինը՝ Շամքորի Լեղանա անապատում: Նրա ընդօրինակած ու մեզ հայտնի վաղագույն ձեռագիրը Սաղմոսարան և Ժամագիրք է: Եսային այն ընդօրինակել է Տավուշ գյուղում՝ Խաչատուր քահանայի պատվերով, 1630–1631 թթ.: Գրիչը հիշատակում է իր ծննդավայր Տավուշ երկրի Թավուզ (Տավուշ) գյուղը. «...ի յերկիրս Տայուշ, ի գիւղս որ կոչի Թավուզ» (Սարգիսեան 1914, 287–288; Հակոբյան, Հովհաննիսյան 1978, 466) այնուհետև հորդորում է հիշել իր մերձավորներին: Հեղինակի ձեռագրերից երկուսը՝ Մաշտոց և Ժողովածու, ընդօրինակվել են 1637 թ.: Առաջինի հիշատակարանում Եսային նշում է, որ Մաշտոցն ընդօրինակել է Տավուշ գյուղի Սուրբ Նահատակ եկեղեցում, այնուհետև թվարկում է ընտանիքի անդամներին անուն առ անուն: Երկրորդ ձեռագրի հիշատակարանը գրեթե չի տարբերվում նախորդից (Տէր-Վարդանեան 2012, 83): Այս ձեռագրի 1637 թվականը հավանաբար վրիպակի արդյունքում Թամարա Մինասյանի աշխատության մեջ նշված է 1657-ով (Մինասյան 2020, 104): Սա հիմք է հանդիսացել հեղինակին Եսայի գրչի գործունեությունը թվագրել 1630–1657 թթ., այնինչ, ինչպես կտեսնենք, նրանից հայտնի վերջին ձեռագիրը թվագրված է 1650-ով: Մեզ հայտնի ձեռագրերից հաջորդը՝ Ավետարանը, թվագրված է 1639-ով: Այս ձեռագրի հիշատակարանում հեղինակը, կրկնելով լղարակցի Հակոբ քահանային, Խորանաշատը տեղադրում է Ջակամ գավառի տարածքում: Այնուհետև Եսային տեղեկություններ է հաղորդում թուրք-պարսկական պատերազմից (Հակոբյան, Հովհաննիսյան 1978, 785–786):

Եսայի գրիչը 1640 թ. Մաշտոց է ընդօրինակում (Հակոբյան, Հովհաննիսյան 1978, 809), 1642 թ. Սաղմոսարան (Հակոբյան 1984, 72), 1645-ին՝ Ավետարան (Հակոբյան 1984, 181–182): Հատկապես հետաքրքրական է 1645 թ. Ավետարանի հիշատակարանը: Ի տարբերություն նախորդների՝ Խորանաշատն այս ձեռագրում

չի հիշատակվում: Ձեռագիրն ընդօրինակվել է Թավուզ (Տավուշ) գյուղում՝ «ընդ հովանեաւ Ս. Նահատակիս»: Եսայի գրիչը ուշագրավ տվյալներ է հաղորդում իրանական պետության կրոնական հալածանքների վերաբերյալ՝ մասնավորապես նշելով հետևյալը. «ի թուականիս Հայոց ՌՂԴ (1645), ի հայրապետութեան տեառն Գրիգորի, ընդ հովանեաւ Ս. Նահատակիս, ի յերկրիս Տայուշ, ի գեաւղս, որ կոչի Թաւուզ, յորում ամի և ըստ մեղաց մերոց բռնացաւ անաւրէնութեան չարիք ի վերայ մեր ի հենէ Պարսից, լուծ ծառայութեան նոցա հարկանելով և տանջելով ստիպեն դարձուցանել ի մոլոր յաւրէնս իւրեանց» (Հակոբյան 1984, 182): Սեֆյան Իրանում, հատկապես սկսած շահ Աբաս II-ից (1642–1666), կրոնական հալածանքները սաստկացել էին (Առաքել Դավրիժեցի 1990, 97; Փափազյան 1956, 85–99): Եսայի գրչի այս վկայությունը փաստում է, որ Տավուշ գավառն անմասն չի մնացել այդ համատարած կրոնական հալածանքներից:

Եսայի գրչի կողմից Տավուշում ընդօրինակված և մեզ հայտնի ձեռագրերն այսքանն են: Բեղուն գրիչ ունեցող տավուշեցու գործունեությունը միայն հայրենի գավառով չի սահմանափակվել: Շամքոր գետի ավազանում գտնվող Ղեղան (Լեղան) անապատում 1650 թ. Եսային ընդօրինակել է Խրատագիրք և Առակագիրք, որը նրանից մեզ հայտնի վերջին ձեռագիրն է (Հակոբյան 1984, 409):

Տավուշ գավառում բացի Եսայի գրչից մատյաններ է ընդօրինակել նաև Ավետիս անունով քահանան: Վերջինս Քամալ (համապատասխանում է Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի Նորաշեն գյուղին) գյուղից էր, որտեղ էլ 1668 թ. ընդօրինակել է մի Ավետարան: Դրա հիշատակարանից տեղեկանում ենք այնտեղ գործող Սուրբ Աստվածածին եկեղեցու մասին (Եգանեան, Ձէյթունեան և ուրիշներ 2004, 275): Գրիչը հիշատակում է նաև Խորանաշատի աթոռակալ Հովհաննես եպիսկոպոսին և իր ընտանիքի անդամներին: Ավետիս քահանայից հայտնի մյուս ձեռագիր Մաշտոցը ընդօրինակվել է 1674 թ. Խորանաշատում (ՄՄ 3536, 134ա, 134բ):

Նրանից մեզ հասած վերջին ձեռագիրը կազմվել է 1679 թ. Ջակամ գավառի Ղարամուրատ գյուղաքաղաքի Հարանց Անապատում. «Գրեցաւ սուրբ Ավետարանս ի դառն ժամանակիս ի լաւ ընտիր օրինակէ ի յերկիր Վերին Ջակամ ի Ղարամուրատի Յարանց անապատիս ձեռամբ մեղօք զառածեալ Աւետիս աբեղայի որ եմ ի յերկրէն Տաւուշու ի գեղէն Քամալու...» (ՄՄ 6705, 264ա, 264բ): Հիշատակարանի վերջում, առանց պատճառների հիշատակման, քահանան հաղորդում է, որ իր որդիները մահացել են:

Տավուշ գավառի գրչագրերին անդրադառնալով՝ տեղին է հիշատակել Մաշտոցյան Մատենադարանում 6822 թվահամարի ներքո պահվող ձեռագիր Ավետարանը, որի հիշատակարաններից մեկում առաջին անգամ վկայված է Տավուշ գավառի Չինչին բնակավայրը: Այս գյուղը այժմ նույն անվամբ մաս է կազմում ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի: Ձեռագիրը ընդօրինակվել է Մկրտիչ քահանայի կողմից 1499 թ. Հաղբատում (ՄՄ, 6822, 313բ): Մաթևոս անունով քահանան 1619 թ. գնել է մատյանը, որի մասին Մարգար անունով մեկ այլ քահանայի գրել է տվել այդ ձեռագրի հիշատակարաններից մեկը (ՄՄ 6822, 316ա): Այնտեղ նա մանրամասն ներկայացրել է իր մեծ գերդաստանը, հորդորելով հիշել

նաև Չինչինի տանուտերին. «Դարձեալ յիշեցէք տանուտէր Չինչինիս պարոն Գուլամիրն, և իւր կողայկիցն՝ պարոն Խանաղին...» (Հակոբյան, Հովհաննիսյան 1974, 689): Այս հիշատակարանում տեղ գտած անձանց ընդարձակ ցանկում ուշագրավ է հատկապես հինգ քահանաների առկայությունը: Այդ հանգամանքը հիմք է տալիս պնդելու, որ Չինչինում նշված տարիներին եղել է զգալի հայ բնակչություն ու գործող եկեղեցի:

Խորանաշատի թեմակալներն ու նրանց եկեղեցաշինական գործունեությունը

Գավառի հոգևոր մշակութային կյանքում տեղի ունեցած զարթոնքն անկասկած պայմանավորված էր Խորանաշատի թեմի գործունեության ակտիվացմամբ ու հատկապես թեմակալների գործադրած ջանքերով: Գրչագրերից ու վիմագրերից ստացվող կցկտուր տեղեկությունները համադրելով, փորձենք պարզաբանել, թե ովքեր են եղել քննվող ժամանակաշրջանում թեմի առաջնորդները:

Եսայի գրչի և Ավետիս Քամալեցու հիշատակարաններում բազմիցս հանդիպում են Խորանաշատի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի մասին հաղորդումներ: 1630 և 1637 թթ. գրչագրված ձեռագրերում Եսային հիշատակում է Յոհան (Հովհաննես) անունով արքեպիսկոպոսին, որպես Խորանաշատի առաջնորդ: Ընդ որում, 1637 թ. որպես աթոռակից հիշատակվում է ոմն Հակոբ քահանա (Հակոբյան, Հովհաննիսյան 1974, 708): Երկու տարի անց Խորանաշատի աթոռակալներ են վկայված Հովհաննես ու Բարսեղ արքեպիսկոպոսները (Հակոբյան, Հովհաննիսյան 1974, 786): Այնուհետև 1642 թ. Եսայի գրիչը կրկին հիշատակում է Հովհաննես արքեպիսկոպոսին՝ նրան տալով «պանծալի» բնորոշումը (Հակոբյան 1984, 73): Ավետիս Քամալեցի գրիչը 1668 թ. նույնպես հիշատակում է Հովհաննես եպիսկոպոսին (Եգանեան, Ջէյթունեան և ուրիշներ, 275):

Թիֆլիսում լույս տեսնող «Նոր դար» օրաթերթում 1888 թ. տպագրված մի թղթակցությունում ծնունդով Ղուլալի գյուղից (Բերդ խոշորացված համայնքի Այգեձոր գյուղն է), հեղինակը վերարտադրել է հայրենի գյուղի եկեղեցում պահվող գրչագրերի հիշատակարանները: Դրանցից մեկում, որը թվագրված է 1669-ով, որպես Խորանաշատի առաջնորդ հիշատակվում է ոմն Գրիգոր արքեպիսկոպոս (Նոր-Դար 1888, № 95, 3): Քանի որ այդ ձեռագրի գտնվելու վայրը հայտնի չէ, նշված հաղորդումը հերքել կամ հաստատել հնարավոր չէ:

Խորանաշատի Հովհաննես եպիսկոպոսի անվան հիշատակությունն այնուհետև հանդիպում է Տավուշի տարբեր բնակավայրերի եկեղեցիների վիմագրերում: Դրանցից պարզվում է, որ նա աչքի է ընկել իր շինարարական ու նորոգչական գործունեությամբ (Դարբինյան 1991, 119–123): Հրաչյա Քարտաշյանը մանրամասնորեն քննելով Խորանաշատի վանական համալիրը ենթադրել է, որ Սուրբ Աստվածածին եկեղեցու աղյուսե վերաշարերը նույնպես կատարվել են Հովհաննես եպիսկոպոսի ջանքերով՝ 17-րդ դարի վերջին քառորդին (Քարտաշյան 1986, 51):

ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի Չորաթան գյուղի եկեղեցու շինարարական արձանագրությունում կարդում ենք. «ԹՎ ՌՃԼԱ (1682) յանուն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ մեղապարտ Ովանէս եպիսկոպոսի

Խորանաշատու» (Արձագանք 1888, № 7, 88; Բարխուտարեանց 1999, 328: Բարխուդարյանցը սխալմամբ թվականը նշում է 1683 (ՌՃԼԲ): Ղաֆադարյան 2007, 277–278):

Բերդ խոշորացված համայնքի Վերին Կարմիրաղբյուր գյուղի եկեղեցու կիսաեղծ շինարարական արձանագրությունը կարդալով, Քաջիկյանը նշում է, որ այն նույնպես կառուցվել է Հովհաննես եպիսկոպոսի ջանքերով (Արձագանք 1888, № 7, 88): Այս տեսակետը կիսում է նաև Հ. Քարտաշյանը (Քարտաշյան 1986, 51): Մեկ այլ վարկածի համաձայն՝ եկեղեցին ավելի վաղ է կառուցված եղել և Հովհաննեսի ջանքերով ընդամենը վերանորոգվել է (Մելյան 2001, 203): Այստեղ գործը բարդանում է նաև նրանով, որ նշված եկեղեցին 1930-ական թթ. երկրորդ կեսին հիմնովին ավերվել է՝ ավելի մշուշելով վերջինիս հիմնադրման ստույգ թվականը: Բարխուդարյանցը հիշատակելով այս եկեղեցին նշում է. «...եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, ծածքն՝ փայտաշէն.

«Ես տէր Վարդանս շինեցի զեկեղեցիս ձեռամբ Մուրադխանի թվ. ՌՃԾ (1701)»:

«Սուրբ խաչս Խանաղին»:

«Ովանէս եպիսկոպոս շինեցի զեկեղեցիս ձեռամբ տէր Գրիգորին» (Բարխուտարեանց 1999, 328):

Այժմ գյուղի թանգարանում պահվում են այդ եկեղեցու արձանագրության բեկորներից երկուսը: Դրանցից չափերով համեմատաբար խոշորի վրա կարդում ենք. «Կարմիր Աղբիւր Ղզլբուլաղ, բնակիչքն բնիկ հօղն արքունի ես տէր Վարդանս շինեցի եկեղեցիս ծեռամբ Մուրատխանի սբ խաչս բարէխաւս է Խանաղին»: Այս արձանագրությունը որոշ վրիպակներով հրատարակել է նաև Բ. Մելյանը (Մելյան 2001, 27): Հեղինակը Բարխուդարյանցի վերծանածն ու թանգարանում պահպանվածը չի նույնացրել՝ համարելով դրանք երկու տարբեր արձանագրություններ: Այս արձանագրությունն անկասկած Բարխուդարյանցի վկայակոչածն է, սակայն այստեղ առկա չէ նրա նշած 1701 թվականը, բացի այդ, Բարխուդարյանցի տարբերակում բացակայում է վերջին տողում առկա «բարէխաւս» բառը: Թանգարանի մյուս արձանագիր բեկորն ավելի համառոտ է, քանի որ մնացած հատվածները ջարդոտված են: Այդ բեկորից կարդում ենք. «...ձեռամբ ...ոբի թվին ՌԾ (1601)»: Ստացվում է, որ գյուղում դեռևս 17-րդ դարի սկզբից գործող եկեղեցի է եղել: Այն սկզբնապես կառուցողի մասին տեղեկություններ առկա չեն: Ամենայն հավանականությամբ եկեղեցին քանիցս ավերվել և վերանորոգվել է: Վիմագրերի ընթերցանության գործում գովելի բծախնդրություն ցուցաբերող Քաջիկյանի այն դիտարկումը, որ Հովհաննես արքեպիսկոպոսի ջանքերով է կառուցվել եկեղեցին, թույլ են տալիս ենթադրել, թե Հովհաննեսը հավանաբար այն հիմնովին վերանորոգել է՝ թողնելով այդ մասին արձանագրություն: Հետևաբար, Բարխուդարյանցի՝ եկեղեցին 1701 թ. կառուցված լինելու մասին վկայությունը մեր ձեռքի տակ եղած աղբյուրների քննությամբ չի հաստատվում:

Բերդի՝ 1930-ական թթ. երկրորդ կեսին հիմնահատակ ավերված Սուրբ Գրիգոր եկեղեցու շինարարական արձանագրությունը վկայում է, որ դրա կառուցմանը Տավուշի մելիք Ղորխմազից բացի, օժանդակել է նաև Հովհաննես արքեպիսկո-

պոսը: Արձանագրությունը գրի են առել Մ. Բարխուդարյանցը (Բարխուտարեանց 1999, 329) և «Արձագանք» թերթի թղթակից Քաջիկյանը: Այս եկեղեցին խորհրդային շրջանում նախապես որպես պահեստ է ծառայել, այնուհետև՝ դահլիճ: Դրանից հետո իշխանությունները նախընտրել են այն հիմնահատակ ավերել: Գտնվում էր ներկայիս Բերդ քաղաքի ոստիկանության շենքի հարևանությամբ: Եկեղեցու ներսի արձանագրության մասին տեղյակ էր նաև Կ. Ղաֆադարյանը, ով 1935 թ. արշավախմբով այցելել էր Բերդի տարածաշրջան: Ղաֆադարյանին սակայն չի հաջողվել ընթերցել արձանագրությունները, և նա գրել է. «Բերդ գյուղի մեծ եկեղեցին ևս ունի արձանագրություններ, բայց եկեղեցին պահեստի է վերածված և լեցուն է ցորենով, ուստի հնարավոր չեղավ արձանագրությունները, որոնք ներսում էին, կարդալ» (Ղաֆադարյան 2007, 304): Եկեղեցու արձանագրության համեմատաբար հաջող վերծանությունը Քաջիկյանինն է. «Անուն Աստուծոյ, ես Թիֆլիսեցի Չիթախեանց մղտիսի Խոջայ Սորլիս շինեցի եկեղեցիս ձեռամբ Խորանաշատու Յովհաննէս եպիսկոպոսի և Թաւուզայ երկրիս մելիք Ղորխմազի կամակցութեամբ յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց Թաղին պեկի Սուլթանին և կողակցին իմոյ Դարէջանին, և որդւոց իմոց Ստեփաննոսին և կողակցին Ասլեզատին, Յարութիւնին և կողակցին Պեկի Խաթունին, Պօղոս սարկաւաքին և դստերցն իմոց ապաշխարող Աննային և Հռիփսիմին, Շահրուպանին և իւր դուստր Քեթևանին, փեսա Մելքոնին և իւր դուստր կողակից Պեկի Սուլթանին» (Արձագանք 1888, № 7, 88): Եկեղեցու կառուցման ծախսերը հոգացած թիֆլիսեցի Չիթաղյան ընտանիքի կատարած այլ շինարարական ձեռնարկումների քննությունը կարող է նպաստել անթվակիր այս արձանագրության գոնե մոտավոր ժամանակի ճշգրտմանը:

Թիֆլիսում առևտրով զբաղվող և բավականին հարստություն կուտակած Չիթաղյանները նորոգել են Սևանա կղզու վանքերը, կատարել նվիրատվություն: Դրա մասին վկայող վիմագրերից մեկը թվագրված է 1654-ով, իսկ երկուսը՝ 1664-ով (Շահխաթունեանց 2014, 351; Արարատ 1871, Ե, 261): Հաղարծինի Սուրբ Աստվածածին եկեղեցու արտաքուստ արևմտյան պատի արձանագրությունից պարզվում է, որ այս նույնպես վերանորոգվել է Չիթաղյանների կողմից՝ 1681 թ. (Ավագյան, Ջանփոլադյան 1977, 49): Ստացվում է՝ Չիթաղյանների գործունեության առաջին թվակիր վկայությունները վերաբերում են 1654 թ., իսկ վերջինը՝ 1681 թ: Հետևաբար, կարող ենք ենթադրել, որ նշված միջակայքում էլ տեղի է ունեցել Բերդի եկեղեցու կառուցումը:

Ընթերցելով Բերդի եկեղեցու արձանագրությունը՝ Քաջիկյանը գրել է. «Եկեղեցին քարաշէն է և շինուած Թիֆլիզեցի Չիթախեանց մահտեսի Սորլիսի ծախքով և Խորանաշատու Յովհաննէս եպիսկոպոսի ձեռքով, ինչպէս ցոյց է տալիս արձանագրութիւնը, ուրեմն աւելի քան 200 տարի յառաջ, ըստ որում Զորաթանի եկեղեցւոյ արձանագրի թուականից յայտնի է, թէ որ ժամանակումն է ապրել յիշատակեալ Յովհաննէս եպիսկոպոսը» (Արձագանք 1888, № 7, 88): Քաջիկյանն այս տողերը գրել է 1885 թ. հուլիսի 9-ին (Արձագանք 1886, № 13, 195): Ստացվում է՝ հեղինակը եկեղեցու կառուցման մոտավոր թվական համարում է 1685 թ.: Դժվար է ասել՝ որևէ այլ բանավոր վկայություն Քաջիկյանին հաղորդել են, թե՝ ոչ, սակայն նրա ենթադրությունը կարող է ճշմարիտ լինել: Այս տեսակետի օգտին է վկայում

նաև այն հանգամանքը, որ եկեղեցու արձանագրության մեջ հիշատակված մելիք Ղորխմազի մասին հիշատակություն կա նաև 18-րդ դարասկզբի մի ձեռագրի հիշատակարանում (Եգանեան, Ջէյթունեան և ուրիշներ 2004, 276):

Անդրադառնալով գրչագրերում ու վիմագրերում հիշատակված Հովհաննեսի ով լինելուն՝ կարելի է երկու վարկած առաջ քաշել: Եսայի գրչի՝ քանիցս հիշատակած Հովհաննեսը և նշված եկեղեցիների կառուցմանը կամ նորոգմանն օժանդակող Հովհաննեսը միևնույն անձն է: Այստեղից կարող ենք արձանագրել վերջինիս երկարակյաց լինելու փաստը, քանի որ համաձայն 1243 թ. Սսի եկեղեցական ժողովում ընդունված «կանոնական սահմանադրության»՝ եպիսկոպոս կարող էր օծվել 30 տարին բոլորած հոգևորականը (Գանձակեցի 1961, 304): Այսինքն, Զորաթանի եկեղեցու կառուցման ժամանակ նա պետք է որ լիներ մոտավորապես 85 տարեկան: Հնարավոր է նաև գործ ունենք նույն անունով երկու տարբեր հոգևորականների հետ: Եթե առաջնորդվենք վերջին տեսակետով, ապա կարող ենք ենթադրել, որ նրանցից առաջինը աթոռակալել է մինչև 1668–1669 թթ., այնուհետև որոշ շրջան աթոռակալել է Գրիգոր արքեպիսկոպոսը: Ապա՝ 17-րդ դարի վերջին քառորդից աթոռակալել է Հովհաննես արքեպիսկոպոսը, ով նշված եկեղեցիների կառուցողն ու վերանորոգողն է: Բոլոր դեպքերում, առկա աղբյուրագիտական նյութը թույլ չի տալիս այս վարկածներից որևէ մեկին առաջնություն տալու:

Վերոնշյալ վիճելի տեսակետները մի կողմ թողնելով՝ արձանագրենք, որ Խորանաշատի թեմակալ Հովհաննես արքեպիսկոպոսը մեծ ներդրում է ունեցել տարածաշրջանի հոգևոր-մշակութային կյանքի աշխուժացման գործում: Նրա օրոք Խորանաշատի միաբանության գործունեությունը կարգավորվել է: Հովհաննեսի ջանքերով գավառի տարբեր բնակավայրերում հիմնադրվել են նոր հոգևոր հաստատություններ: Վերջին հանգամանքը վկայում է, որ այդ բնակավայրերն ունեին բավականաչափ բնակչություն, ուստի նոր եկեղեցիների ու հոգևոր սպասավորների կարիք կար: Նշված ժամանակաշրջանին պատկանող բազմաթիվ գյուղատեղերը, գերեզմանոցների հետքերը նույնպես արտացոլում են այդ ընթացքում գավառի խիտ բնակեցված լինելը (Ղաֆադարյան 2007, 231–307):

Ա. Տեր-Գրիգորյանը, առանց որևէ աղբյուր վկայակոչելու տեսակետ է հայտնում, որ Տավուշի մարզի համանուն գյուղի եկեղեցին կառուցվել է 17-րդ դարի սկզբին (Տեր-Գրիգորյան 2013, 193): Անկասկած, քննվող ժամանակաշրջանում Տավուշ գյուղում գործել է եկեղեցի, ինչի մասին քանիցս փաստում է նաև Եսայի գրիչը: Հենց այդ եկեղեցում՝ Սուրբ Նահատակում էլ նա ընդօրինակել է իր մատյաններից մի քանիսը: Նշված եկեղեցու մասին այլ աղբյուրներում հիշատակություններ առկա չեն, ուստի դժվար է պատկերացում կազմել, թե երբ է այն կառուցվել: Հավանաբար 18-րդ դարում այն ավերվել է ու դադարել է գործել: Տավուշ գյուղի ներկայիս եկեղեցին, որի կառուցումը վերագրվում է 19-րդ դարին, ենթադրաբար կառուցվել է նախկին եկեղեցու տարածքում կամ դրա ավերակների վրա՝ վերանվանվելով Սուրբ Աստվածածին: Որպես ասվածի ապացույց կարող ենք մատնանշել այն հանգամանքը, որ Բարխուդարյանցը մանրամասն թվարկելով Տավուշ գյուղում ու հարակից վայրերում գտնվող բոլոր սրբավայրերը, ավերակներն ու մատուռները՝ Սուրբ Նահատակ անունով ավերակ կամ ուխտատեղի չի հիշատա-

կում: Այնուհետև անդրադառնալով Սուրբ Աստվածածին եկեղեցուն՝ նա նշում է. «Եկեղեցուս հիւսիսային կողմում կայ մի առանձին փոքր խորան (բացի փոքր խորանից) որ ուխտատեղի է. ոչ ոք չգիտէ գիւղացիներից, թէ ինչ ուխտատեղի է» (Բարխուտարեանց 1999, 329): Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա կարող ենք նաև կռահել, որ Բարխուդարյանցի հիշատակածը Սուրբ Նահատակ եկեղեցուց պահպանված խորանն էր, որը շարունակում էր ուխտատեղի մնալ:

Տավուշ գավառում գործում էր նաև 1668 թ. Ավետիս քահանայի հիշատակած Քամալի Սուրբ Աստվածածին եկեղեցին: Հյուսիսարևելյան Հայաստանի գավառները 18-րդ դարից սկսած պատուհասած լեզգիների արշավանքներից գյուղը մարդաթափ է լինում: Աստվածածին եկեղեցին նույնպես ավերվում ու դադարում է գործել: 19-րդ դարի երկրորդ կեսին գյուղատեղին բնակեցվում է Գյունաշից[1] եկած հայերով, իսկ Աստվածածին եկեղեցին վերականգնվում է (Դարբինյան 1991, 121):

Հին Հախում գյուղատեղում (գտնվում է Բերդ խոշորացված համայնքի Նոր Վարագավան գյուղից 1,5 կմ հարավ-արևելք՝ Վարագաջուր գետի աջ ափին) պահպանված մի արձանագրություն վկայակոչելով՝ Ա. Տեր-Գրիգորյանը նշում է, որ այն եկեղեցու շինարարական արձանագրություն է՝ թվագրված 1633-ով (Տեր-Գրիգորյան 2013, 64): Կիսավեր մատուռի տարածքում, այժմ էլ տեսանելի են 17-րդ դարին վերաբերող խաչքարեր ու տապանագրեր, սակայն որևէ շինարարական արձանագրություն առկա չէ: Նման արձանագրություն չի հիշատակում նաև Ղաֆադարյանը (Ղաֆադարյան 2007, 306) հետևաբար հեղինակի հաղորդումն անհիմն է թվում:

Բերդ խոշորացված համայնքի տարբեր շրջաններում պահպանվել են 17-րդ դարի բարձրարվեստ խաչքարեր ու տապանաքարեր, որոնք պատկանում են ժամանակին Հայաստանում մեծ ճանաչում գտած քարգործ վարպետների ձեռքի աշխատանքին: Հայաստանի մի շարք շրջաններում իր գործերով հայտնի Քիրամ կազմողից խաչքարեր են պահպանվել նաև Բերդ քաղաքի հին գերեզմանոցում: Այս խաչքարերից մեկի վրա կարդում ենք. «ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ ԹՎ ՌԾԹ (1610)» (Բարխուդարյան 1963, 166): Բերդում պահպանվել են նաև մեկ այլ վարպետի՝ Խաչատուրի ստեղծած խաչքարերը:

Շխմուրատի վանական համալիրում 1611 թվակիր խաչքարաբեկորը նույնպես հեղինակել է Քիրամը: Գավթում կա նաև 1619 թվակիր խաչքար (Սարգսյան 1956, 24): Մ. Բարխուդարյանցի վկայությամբ Տավուշ գյուղի եկեղեցում նույնպես կար Քիրամի խաչքարերից (Բարխուտարեանց 1999, 329): Այնտեղ մինչ օրս պահպանվում են մեկ այլ կազմողի՝ Վարդանի՝ 1618-ով թվագրված երկու խաչքարերը:

---

1 Այս բնակավայրը գտնվում էր Բերդ խոշորացված համայնքի Ներքին Կարմիրաղբյուր և Այգեպար գյուղերից ոչ հեռու՝ Ադրբեջանի Ալիբեյլու գյուղի հարևանությամբ: Բնակիչները Քամալ տեղափոխվելուց հետո երկար տարիներ շարունակում էին մշակել նախկին բնակավայրի այգիներն ու վարելահողերը: Խորհրդային իշխանության սկզբնական տարիներին, սակայն, այդ հողերը տրվեցին հարակից ադրբեջանական գյուղերին:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով կարող ենք արձանագրել, որ պարսկա-օսմանյան տևական հաշտության շրջանում Տավուշ գավառը բավականին զարգացում ապրեց: Հիմնվեցին նոր բնակավայրեր, ստվարացավ բնակչությունը, ինչի հետևանքով աշխուժացավ նաև հոգևոր կյանքը:

Աղբյուրներում այլևս չհիշատակվող և գոյությունը դադարեցրած Խորանաշատի եպիսկոպոսական թեմը վերստին սկսեց գործել՝ կարևոր դեր կատարելով Տավուշ գավառի հոգևոր-մշակութային կյանքում:

Խորանաշատի թեմակալ Հովհաննեսի ջանքերով ժողովրդի հոգևոր պահանջները բավարարելու նպատակով Տավուշի տարբեր բնակավայրերում հիմնադրվեցին նոր եկեղեցիներ ու վանական հաստատություններ, զուգահեռաբար նորոգվեցին ավերվածները:

Այդ հոգևոր կենտրոններում ստեղծվեցին ձեռագրեր, որոնցից մի քանիսը հասել են մեզ: Դրանց հիշատակարանները կարևոր սկզբնաղբյուր են Տավուշ գավառի պատմության տարբեր հարցերի վրա լույս սփռելու տեսանկյունից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ձեռագիր սկզբնաղբյուրներ

ՄՄ 3536 – Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3536:

ՄՄ 6705 – Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 6705:

ՄՄ 6822 – Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 6822:

Տպագիր սկզբնաղբյուրներ

ԱՎԱԳՅԱՆ, ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ 1977 – *Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Իջևանի շրջան*, կազմեցին՝ Ս. Ավագյան, Հ. Ջանփոլադյան, Երևան, ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1977:

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1963 – Բարխուդարյան Ս., *Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատրակչություն, 1963:

ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ 1999 – Մակար եպս. Բարխուտարեանց, *Աղունից երկիր և դրացիք, Արցախ*, կազմեց՝ Պ. Զորանյան, Երևան, «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 1999:

ԳԱՆՁԱԿԵՑԻ 1961 – Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն հայոց*, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1961:

ԴԱՎՐԻԺԵՑԻ 1990 – Առաքել Դավրիժեցի, *Գիրք պատմութեանց*, աշխատասիրությամբ Լ. Խանլարյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1990:

ԵԳԱՆԵԱՆ, ՋԷՅԹՈՒՆԵԱՆ 2004 – *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Բ*, կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Ջեյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկերեան, Երևան, Նաիրի հրատարակչություն, 2004:

ՀԱԿՈԲՅԱՆ 1984 – *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, (1641–1660 թթ.), հ. Գ*, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984:

ՀԱԿՈԲՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 1974 – *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.), հ. Ա*, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1974:

ՀԱԿՈԲՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 1978 – *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակա-*

րանները (1621–1640), հ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978:

ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ 2014 – Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց, *Սկզբագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրատարակչություն, 2014:

ՍԱՐԳԻՍԵԱՆ 1914 – *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա*, յօրինեց Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, Վենետիկ–Ս. Ղազար, 1914:

ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ 2012 – *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Է*, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, «Նայիրի» հրատարակչություն, 2012:

ՓԱՓԱԶՅԱՆ 1956 – Փափազյան Հ., *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, պրակ առաջին (ԺԵ–ԺԶ դդ.)*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1956:

Ուսումնասիրություններ

ԴԱՐԲԻՆՅԱՆ 1991 – Դարբինյան Ս., Հովհաննես արքեպիսկոպոս Շինարար, *«Էջմիածին»*, 1991, № Ա–Գ, էջ 119–123:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 2007 – Ղաֆադարյան Կ., Շամշադինի 1935 թվի հնագիտական գիտարշավը, *Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության*, Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007, էջ 231–307:

ՄԵԼՅԱՆ 2001 – Մելյան Բ., *Կարմիրաղբյուր*, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2001:

ՄԻՆԱՍՅԱՆ 2020 – Մինասյան Թ., *Ուտիքի գրչության կենտրոնները*, Երևան, «Մատենադարան» հրատարակչություն, 2020:

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ 2006 – Մկրտումյան Լ., *Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII–XVIII դդ.*, Երևան, «Տնտեսագետ» հրատարակչություն, 2006:

ՍԱՐԳՍՅԱՆ 1956 – Սարգսյան Գ., Շխմուրատի վանքը, *«Էջմիածին»*, 1956, № Գ, էջ 20–28:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ 2013 – Տեր-Գրիգորյան Ա., *Տավուշ (Շամշադին)*, Երևան, «Եգեա» հրատարակչություն, 2013:

ՔԱՐՏԱՇՅԱՆ 1986 – Քարտաշյան Հ., Խորանաշատի ճարտարապետական համալիրը, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986, № 4, էջ 42-52:

Պարբերական մամուլ

ԱՐԱՐԱՏ 1871 – «Արարատ» ամսագիր, Էջմիածին, 1871, սեպտեմբերի 30:

ԱՐՁԱԳԱՆՔ 1886 – «Արձագանք» թերթ, Թիֆլիս, 1886, ապրիլի 6:

ԱՐՁԱԳԱՆՔ 1888 – «Արձագանք» թերթ, Թիֆլիս, 1888, փետրվարի 28:

ՆՈՐ-ԴԱՐ 1888 – «Նոր-Դար», թերթ, Թիֆլիս, 1888, հունիսի 16:

Andranik Yesayan

Institute of History NAS RA
yesayan1990@gmail.com

THE SPIRITUAL-CULTURAL LIFE OF TAVUSH CANTON IN THE 17TH CENTURY

Keywords: Tavush Canton, Safavid Iran, Khoranashat diocese, manuscript, Bishop Hovhannes, Berd.

In the early 17th century, Northeastern Armenia became a part of Safavid Iran. For over a century, the region was spared from large-scale military operations, creating favorable conditions for the spiritual and cultural development of Tavush Canton. The Tavush diocese, with its center at Khoranashat, restarted its activity at the beginning of the 17th century. After a long break the spiritual life was revived here, the activity of the diocese was regulated. Bishop Hovhannes of the Khoranashat diocese initiated the construction of new churches and monasteries in various settlements of Tavush to meet the spiritual needs of the people. Additionally, efforts were being made to restore and repair the old monasteries and churches in the Canton. Several manuscripts were created in the 17th century in these spiritual centers, and some have survived to this day. The colophons of these manuscripts provide important data on various issues related to the history of the Tavush Canton.

Андраник Есаян

Институт истории НАН РА
yesayan1990@gmail.com

ДУХОВНО-КУЛЬТУРНАЯ ЖИЗНЬ ТАВУШСКОЙ ПРОВИНЦИИ В 17 ВЕКЕ

Ключевые слова: Тавуш, Сефевидский Иран, Хоранашатская епархия, рукопись, епископ Оганес, Берд.

В начале 17 века северо-восточная Армения вошла в состав Сефевидского Ирана. Более века регион был избавлен от масштабных военных действий, создавая благоприятные условия для духовного и культурного развития Тавушской провинции. Тавушская епархия с центром в Хоранашате возобновила свою деятельность в начале 17 века. После длительного перерыва здесь возродилась духовная жизнь, наладилась деятельность епархии. Епископ Хоранашатской епархии Оганес инициировал строительство новых церквей и монастырей в различных населенных пунктах Тавуша для удовлетворения духовных потребностей народа. Кроме того, предпринимаются усилия по восстановлению и ремонту старых монастырей и церквей в провинции. В этих духовных центрах в 17 веке были созданы несколько рукописей, некоторые из них сохранились до наших дней. Их записи являются важным источником данных по различным вопросам истории Тавушской провинции.

Անդրանիկ Եսայան

ՏԱՎՈՒՇ ԳԱՎԱՌԻ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ 17-ՐԴ ԴԱՐՈՒՄ



Նկ. 1. Վերին Կարմիրաղբյուր գյուղի թանգարանում պահվող ավերված Սուրբ Հովհաննես եկեղեցու արձանագրությունները

Նկ. 2. Վերին Կարմիրաղբյուր գյուղի թանգարանում պահվող ավերված Սուրբ Հովհաննես եկեղեցու արձանագրությունները



Նկ. 3. Խորանաշատի վանական համալիրի Սուրբ Աստվածածին եկեղեցին